

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ**

**Վիկտորյա Առստամյան
ՄՄՀ
Արցախ**

***Անտառագիտ:** Հողվածում ներկայացված է աշխատաշուկայում տիրող պատկերը՝ հիմնվելով տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության զեկույցի տվյալների վրա: Քանի որ զբաղվածության վերաբերյալ մինչ օրս իրականացվող վիճակագրությունը բոլորի կողմից միանշանակ չէր ընդունվում, ապա մեր կողմից նույնպես կատարվեց փորձ ուսումնասիրել տվյալ ոլորտում տիրող իրավիճակը, ինչպես նաև ներկայացնել որոշ առաջարկություններ, որոնց իրականացումը, մեր կարծիքով, դրական կանդրադառնան շուկայում տեղի ունեցող իրավիճակին:*

***Բանալի բառեր՝** Գործազրկություն, զբաղվածություն, աշխատանքի շուկա, Արցախի Հանրապետություն, աշխատանքային ռեսուրսներ, ՏՏԿԱՀ:*

Հաշվի առնելով այն բոլոր դժվարությունները և բարդ պայմանները, որոնք տեղի են ունեցել մեր երկրում, անխուսափելիորեն հանգում ենք այն եզրակացության, որ այսօրվա աշխատաշուկայում տիրող իրավիճակը հեռու է իդեալականից և անհրաժեշտ է իրականացնել տվյալ ոլորտին վերաբերող գիտական ուսումնասիրություններ: Պարզ է, որ եթե աշխարհի զարգացած տնտեսություններ ունեցող երկրներն անընդմեջ փնտրումների և գիտական հիմունքների անընդհատ աշխատանքի մեջ են գտնվում, ապա բավականին «երիտասարդ» և մեծ դժվարություններով անցած տնտեսություն ունեցող Արցախի Հանրապետությունը դեռ մեծ անելիքներ և հայտնագործություններ ունի անելու այդ ոլորտում:

Բոլորիս քաջ հայտնի է, որ գործազրկության առաջացման պատճառները բազմազան են ու տարաբնույթ, սկսած կառուցվածքային, ֆրիկցիոն, ցիկլային գործազրկությունից, մինչև սեզոնային, թաքնված, լճացած և այլն, սակայն երևույթի էությունը պարզաբանելիս գործազրկությունը դիտարկվում է որպես մեկ ամբողջական համակարգ: Բնականոն է, երբ մարդկանց մի մասը չի աշխատում այն պատճառով, որ նրանց անհրաժեշտ է փոխել մասնագիտությունը կամ աշխատանքի և բնակության վայրը, իսկ այլ ճյուղերում անհրաժեշտ են աշխատողներ՝ նոր մասնագիտություններով: Գործազրկությունը դառնում է խնդիր, երբ այն պայմանավորված է լինում տնտեսական ճգնաժամերով և գերազանցում է գործազրկության բնական մակարդակը: Տվյալ երևույթի սրությունը տնտեսական կյանքի որևէ հատվածում ծառանում է յուրաքանչյուր պետության առաջ և նրա արդյունավետ լուծումը ցանկացած պետության գերխնդիրներից է:

Ակնհայտ է, որ աշխատողները միատիպ չեն, հետևաբար անհրաժեշտ է ճիշտ գնահատել աշխատուժի կարողությունները և սեզոնավորել նրանց ըստ տարիքային խմբերի: Օրինակ, 45-65 տարեկան աշխատողներ, ովքեր աշխատում են արդեն տասնյակ տարիներ, լիիրավ տեղյակ են իրենց գործին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց գերակշռող մասը ստացել է միջին մասնագիտական կրթություն, այդ անձինք ունեն շատ բարձր պատասխանատվություն, ինչն էլ արտացոլվում է իրենց կողմից կայացրած որոշումներում, սակայն ունենալով խորհրդային տարիների կրթություն, դժվարանում են անցում կատարել շուկայական համակարգի պահանջներին: Հաջորդ խումբը 35-45 տարեկան աշխատողներն են: Այս ենթախումբում հաճախակի ենք հանդիպում թեկնածուական պաշտպանած աշխատակիցների, սակայն նրանք բախվում են մասնագիտական կամ ինքնահաստատման անհրաժեշտությանը: Լինում են դեպքեր, երբ այս խմբի աշխատողները «բախվում» են առաջին խմբի աշխատողներին, քանի որ վերջիններս «ամուր» են պահում իրենց

զբաղեցրած դիրքերը և գիտելիքները: Այս խմբի աշխատողների մոտ կարծրացած չեն տարբեր գաղափարախոսությունները, և նրանք հիմնականում հակված են լինում պրոֆեսիոնալ աճի և նորամուծությունների: Եվ վերջին խումբը 20-35 տարեկան աշխատողներն են: Առաջին հայացքից թվում է, որ այս տարիքային խմբի անձիք ավելի հեշտ են կառավարվում և հեշտությամբ են ընկալում կատարվող փոփոխությունները, սակայն իրականում այդպես չէ: Այստեղ, որպես խոչընդոտ կարող է հանդես գալ մնացած աշխատակիցների հետ կայուն մասնագիտական համագործակցության բացակայությունը, և գաղտնիք չէ, որ այս տարիքային խմբի անձանց կողմից բարոյաէթիկական արժեքների ընկալման տարբերություններ կան և բացակայում է կոլեկտիվ նորմերի փաստը, ինչն էլ խանգարում է «Ֆլանդրացիները» համագործակցության փաստը և խոչընդոտում է կառավարչական որոշումներ կայացնելու ժամանակ: [4, 454] Ելնելով նշվածից՝ կարելի է հանգել նրան, որ գործազրկության առումով ԱՀ աշխատանքի շուկայում առավել խոցելի են այն անձինք, ովքեր առաջին անգամ են աշխատաշուկա «մուտք գործել»:

Հարկ է նշել, որ ԱՀ-ում, ինչպես և շատ այլ երկրներում, աշխատուժի ուսումնասիրությունների հիման վրա գնահատվող գործազրկության և գրանցված գործազրկության մակարդակները նույնական չեն, իսկ հաճախ դրանք կարող են էականորեն տարբերվել: Մովորաբար համարվում է, որ գրանցված գործազրկության մակարդակը գերազանցում է իրական գործազրկության մակարդակն այն երկրներում, որտեղ գործազրկության սոցիալական պաշտպանության և ապահովագրության համակարգերը ուռճացած են, և հակառակը՝ գրանցված գործազրկության մակարդակը կարող է անհամեմատ ցածր լինել իրական գործազրկության մակարդակից այն երկրներում, որտեղ այս համակարգերը խիստ թերֆինանսավորվում են:

2015թ. հանրապետությունում իրականացվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտություն ընդգրկելով երկրի բոլոր շրջանները: Տվյալները հիմնված են հանրապետության 1620 տնային տնտեսությունների 15-75 տարեկան անդամների պատասխանների վրա: [1, էջ 51]

Ուսումնասիրելով Արցախի Հանրապետության բնակչության ու աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը մենք տեսնում ենք (զծապատկեր 1), որ աշխատանքային տարիքի բնակիչների՝ 71%-ից (99215 մարդ) միայն 62%-ն (61121 մարդ) է համարվում տնտեսապես ակտիվ բնակչություն: Իսկ գործազրկության մակարդակը տնտեսապես ակտիվ բնակչություն նկատմամբ կազմել է 11,5% (7042 մարդ): Ինչ վերաբերվում է պաշտոնապես գրանցված գործազրկությանը, ապա 2017թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառվել է 1368 մարդ, իսկ մեր ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել է 1232 մարդ: [2, էջ 49]

2015թ. զբաղված բնակչության 56,6 %-ն ընդգրկված է պետական կառավարման, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտներում: Զբաղվածության ցածր ցուցանիշներ են գրանցվել ֆինանսական և ապահովագրական գործունեության, անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտում (1,1%), տեղեկատվության և կապի ոլորտում (1,8%) և շինարարության ոլորտում (3,2%): [2, էջ 51]

Շատ կարևոր է ուսումնասիրել գործազրկությունը տարածաշրջանային տեսանկյունից, քանի որ շրջանների բնականոն զարգացմանն այն մեծ անդրադարձ է ունենում: Նշենք նաև, որ շրջաններում ցածր զբաղվածությունը պայմանավորված է բազմաթիվ առանձնահատկություններով, այդ թվում նաև աշխարհագրական դիրքով, բնակչության թվաքանակով և այլն: Տարածաշրջանային տեսանկյունից ուսումնասիրելով պաշտոնապես գրանցված գործազուրկների ցուցանիշները մենք տեսնում ենք, որ բնակչության այդ հատվածում գերակշռող տեղ է զբաղեցնում մայրաքաղաքի բնակչությունը՝ 69,9% և 66,2% համապատասխանաբար 2015թ. և 2016թ. դրությամբ: Տոկոսային հարաբերությամբ բարձր ցուցանիշներ են նաև Մարտունիում (2015թ.՝ 9%, 2016թ.՝ 8,5%) և Մարտակերտում (2015թ.՝ 7,1%, 2016թ.՝ 6,9%): Խիստ կարևոր է նաև մայրաքաղաքում աշխատաշուկայի կենտրոնացվածության խնդիրը, անհրաժեշտ են պետական ծրագրեր ծայրամասային շրջանների համաչափ զարգացման ուղղությամբ: [1, էջ 50]

Տարիքային տեսանկյունից 15-34 տարեկանների տեսակարակ կշիռը առանձնահատուկ է ՏՏԿԱՀ կողմից հետազոտված խմբերում հաշվառված գործազուրկների կազմում (2015թ.՝ 44,3%): [2, էջ 50] Հարկ է նշել, որ սա այն խոցելի տարիքային խումբն է, որն աշխատանքի բացակայության պատճառով, կարող է համալրել արտագաղթողների շարքերը:

Գործազրկության հիմնախնդրի մեր կողմից կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ չնայած պետական զբաղվածության կենտրոնի ԱՀ-ում առկա 2% գործազրկության մակարդակի «ոգեվորող» ցուցանիշի, այնուամենայնիվ գործազրկությունը մեզ մոտ բավական բարձր է, հետևապես առկա է «ստվերային» գործազրկությունը: Այսպիսով, մեր կարծիքով, զբաղվածության պետական ծառայության տվյալները իրականությանը չեն համապատասխանում այն պատճառով, որ չի գործում հասարակություն և զբաղվածության կենտրոն կապը: Այն որպես աշխատանքային շուկայի կարգավորիչի լիարժեքորեն չի իրականացնում իր ֆունկցիաները: Վիճակագրական տվյալներում նշված «ինքնազբաղված» համարվող անձանց չի կարելի բոլորին չհամարել գործազուրկ, քանի որ տվյալ անձանց շարքերում կան մեծ թվով մարդիկ, ովքեր ճարահատյալ, ավանդույթի համաձայն բնակվում են գյուղային համայնքներում, ունեն հողատարածք, սակայն ակտիվ տնտեսական գործունեություն չեն ծավալում, չունեն մինիմալ կենսամակարդակի ապահովման համար անհրաժեշտ եկամուտների մակարդակ և երբեմն ունենում են աշխատելու կամ սոցիալական որևէ ծրագրից օգտվելու ցանկություն:

Այսպիսով, հաշվի առնելով որ շուկայական հարաբերությունների արմատավորումը հնարավորություն է տվել առանձին տնտեսավարող սուբյեկտների սեփական նախաձեռնություններով գործունեության ծավալմանը, որը որոշակիորեն փոփոխել է տնտեսության մեջ առկա զբաղվածության հիմնախնդիրը, սակայն այդ խնդրի արմատական լուծումը հնարավոր է միայն պետական մշակված քաղաքականության միջոցով:

Մեր կարծիքով գործազրկության հիմնախնդրի կարգավորումը հնարավոր է, եթե.

1. ձևավորվի գործարարության միջավայրի, որը ենթադրում է համապատասխան իրավական և տնտեսական դաշտի ապահովում, այնպիսի միջավայրի ապահովում, որը հնարավորություն կտա խթանել ինչպես տեղական ներդրումների աճին, այնպես էլ գրավիչ կդառնա օտարերկրյա ներդրողների համար:


2. նպաստենք մանր ու միջին գործարարության ծավալմանը և անշուշտ հետագա «հոգատարության» վարմանը, որը մեր կարծիքով հնարավորություն կտա լուծել ինչպես զբաղվածության այնպես էլ եկամուտների վերաբաշխման խնդիրը:

3. մշակել առավել էֆֆեկտիվ մեխանիզմներ աշխատանքային ռեսուրսների օգտագործման համար:

4. ուժեղացնել արհմիությունների դերը աշխատանքի շուկայի կարգավորման գործընթացում:

Գործազրկության մակարդակի նվազեցման նպատակով կարևորվում են նաև օրենսդրական բարեփոխումների իրականացումը՝ կապված աշխատանքային միգրացիայի, ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակի կարգավորման հետ, ինչպես նաև այնպիսի միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են գյուղաբնակ աշխատուժին զբաղվածության պետական ծրագրերում ներգրավելը, տարածաշրջանների համաչափ զարգացումը, երիտասարդներին և կանանց՝ որպես գործազրկության մակարդակի նվազեցմանը նպաստող նպատակային խմբեր դիտարկելը (նրանց շրջանում գործազրկության մակարդակը համեմատաբար բարձր է), ինչպես նաև աշխատաշուկայում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ բնակչության իրազեկման ապահովումը և այլն:

Գծապատկեր 1. Արցախի Հանրապետության բնակչության կառուցվածքը 2015թ. դրությամբ.
[2, էջ 49]



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին <http://stat-nkr.am>
2. ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը վիճակագրական - վերլուծական զեկույց, <http://stat-nkr.am>
3. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ԼՂՀ օրենք:
4. Առստամյան Վ., Եգանյան Մ., Երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները ժամանակակից պայմաններում, Մետրոպ Մաշտոց Համալսարան, Լրատու, Եր., 2015:

РЕЗЮМЕ

**Проблемы рынка труда Республики Арцах и пути их решений
Виктория Арустамян**

Ключевые слова: Безработица, занятость, рынок труда, РА, трудовые ресурсы, ОИУЖДХ.

В статье представлена ситуация, имеющая место на рынке труда Республики Арцах, основывающаяся на докладе об обобщенном исследовании уровня жизни (жилищных условий) домашних хозяйств. Учитывая неоднозначность оценки достоверности, представленной статистическими службами информации о занятости трудовых ресурсов, с нашей стороны так же была осуществлена попытка изучения реальных данных. Так же нами был представлен ряд предложений, осуществление которых, на наш взгляд, способствует улучшению ситуации на рынке труда Республики Арцах.

SUMMARY
Problems of the Labor Market of the Republic of Artsakh and Ways of their Solutions
Viktorya Arstamyan

Key words: Unemployment, employment, labor market, RA, labor resources, Integrated Living Standards Survey.

The article presents the situation in the labor market of the Republic of Artsakh, based on the report on the generalized study of living standards (housing conditions) of households. Given the ambiguity in assessing the reliability of information provided by statistical services on employment, we also attempted to study real data. We submitted a number of proposals, the implementation of which, in our opinion, contributes to the improvement of the situation in the labor market of the Republic of Artsakh.